



Կարգապահական գործ թիվ ԿԳ-15012

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2015 թվականի հուլիսի 06-ի թիվ 115 նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/75-Ա

ՓԱՍՏԱՔԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԼԱԶԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Կարեն Մեծլումյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Նելլի Հարությունյանի, Լուսինե Սահակյանի, Կարեն Սարգսյանի, Լիպարիտ Սիմոնյանի, Ալեքսանդր Սիրունյանի, Երվանդ Վարդանյանի, Մարտուն Փանոսյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Հովհաննես Լազարյանին (արտոնագիր թիվ 729) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից ՀՀ փաստաբանների պալատի նախագահին տրամադրված 17.02.2015թ. տեղեկանքի համաձայն փաստաբան Հովհաննես Լազարյանն ունի 20.000 (քսան հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2014թ. հոկտեմբերից 2015թ. հունվար (ներառյալ) ամիսների համար:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալի 17.02.2015թ. թիվ 42-Ա/ԿԳ-15012 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Համլետ Տերտերյանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1 կետի խախտման հատկանիշներով:

Կարգապահական գործը Պալատի խորհրդին է հանձնվել 20.02.2015թ-ին:
 Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2015 թվականի հուլիսի 6-ին, ժամը 18:30-ին՝ ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

3. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

Փաստաբան Հովհաննես Լազարյանը թեև պատշաճ ծանուցվել է կարգապահական նիստի վայրի և ժամի մասին, սակայն խորհրդին անհայտ պատճառներով նիստին չէր ներկայացել:

4. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Պալատի խորհուրդն, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) փաստաբան Հովհաննես Լազարյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 19.10.2007թ. (հաստատվում է Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 06.07.2015թ. տրամադրված տեղեկանքով),

2) փաստաբան Հովհաննես Լազարյանն ունի 20.000 (քսան հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2014թ. հոկտեմբերից 2015թ. հունվար (ներառյալ) ամիսների համար (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից ՀՀ փաստաբանների պալատի նախագահին տրամադրված 17.02.2015թ. տեղեկանքով),

3) փաստաբան Հովհաննես Լազարյանն իր անդամավճարի պարտքը չի մարել (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 06.07.2015թ. խորհրդին տրամադրված տեղեկանքով),

4) փաստաբան Հովհաննես Լազարյանի անդամավճարի պարտքը Պալատին 06.07.2015թ. դրությամբ կազմում է 75.000 (յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ:

5. Պատասխանողի անձր բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 06.07.2015թ. տրամադրված տեղեկանքի համաձայն Հովհաննես Լազարյանի (արտոնագիր 729, ստացված՝ 19.10.2007թ.) նկատմամբ 2010-2015թթ. ընկած ժամանակահատվածում 7 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ անդամավճար վճարելու պարտավորությունը չկատարելու համար, որոնցով Պալատի խորհրդի՝

- 25.02.2010թ. թիվ 5/1 որոշմամբ կարգապահական վարույթը կարճվել է արտոնություն կիրառելու հիմքով:
- 04.08.2010թ. թիվ 18/3 որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ նկատողություն: Տույժը մարվել է:
- 09.11.2010թ. թիվ 30/5 որոշմամբ կարգապահական վարույթը կարճվել է արտոնություն կիրառելու հիմքով:
- 09.08.2011թ. թիվ 16/3 որոշմամբ կարգապահական վարույթը կարճվել է արտոնություն կիրառելու հիմքով:

- 02.04.2014թ. թիվ 86/1-Ա որոշմամբ կարգապահական վարույթը կարճվել է արտոնություն կիրառելու հիմքով:
- 16.01.2014թ. թիվ ԿԳ/6-Ա որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ նկատողություն: Տույժը մարվել է:

6. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Հովհաննես Լազարյանին պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության, հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերության համաձայն՝ Փաստաբանը փաստաբանների պալատի սահմանած չափով և կարգով մուծում է անդամավճար՝ փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար: Նույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ:

Համաձայն «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի՝ «Փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար:»:

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ.-ին թիվ 33/6-Լ որոշմամբ ընդունված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի (այսուհետև Կարգ) 7-րդ կետի՝ Փաստաբանները յուրաքանչյուր ամսվա համար անդամավճարների վճարումը կատարում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը, իսկ նույն Կարգի 21-րդ կետով սահմանվում է՝ «Ամենամսյա վճար վճարելու պարտականությունը խախտելու համար փաստաբանը կամ օգնականը ենթակա են կարգապահական պատասխանատվության:»:

Վերոնշյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ սահմանված ժամկետներում անդամավճար չվճարելու համար փաստաբանն ենթակա է պատասխանատվության:

Փաստաբան Հովհաննես Լազարյանը խախտել է վերը նշված նորմերի պահանջները, որն ապացուցվում է գործում առկա՝ ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից 17.02.2014թ. և 06.07.2015թ. տրված տեղեկանքներով: Ավելին, կարգապահական վարույթ հարուցելուց հետո էլ Հովհաննես Լազարյանը շարունակել է խախտել վերը նշված նորմերի պահանջները և կարգապահական վարույթը Խորհրդում լսվելու ժամանակ էլ վերը նշված խախտումն առկա էր: Միաժամանակ, Խորհուրդն արձանագրում է, որ Հովհաննես Լազարյանը բազմիցս ենթարկվել է կարգապահական պատասխանատվության անդամավճար չվճարելու համար, սակայն այն ևս չի նպաստել նրան, որ Հովհաննես Լազարյանը փոխի իր վարքագիծը և չխախտի ՀՀ օրենսդրության, ինչպես նաև Պալատի ներքին իրավական ակտերի պահանջները:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի,

39.7. հողվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9. հողվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հողվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով էտրիուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց ՝

1. Փաստաբան Հովհաննես Լազարյանին (արտոնագիր թիվ 729) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հողվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Հովհաննես Լազարյանի (արտոնագիր թիվ 729) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Հովհաննես Լազարյանին (արտոնագիր թիվ 729):

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից՝ մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

Նիստը նախագահող՝

Կարեն Մեժլումյան